

# ԿԵՆՍԱԳԻՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ

## ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂԲԱՑԻՈՅ

~~~~~ ~~~~~ ~~~ ~~~

Հինգերորդ դարն Հայոց համար նույրական է եղեր ոչ այնքան իւր արտաքին՝ որքան մուալոր տեսարանավ։ Այն դարու մէջ իմաստութեան շրջմոլիկ քայլերուն ասպնջական եղաւ Հայաստան, և մեծարու ասպնջական նորա մէջ ընճայեց իւր պանծալի ախոյեանքն առ զիտութիւն, — զի սոցա նկատմամբ միայն է մեր խօսքն, — որոց իւրաքանչիւրն թէպէտ յինքեան անզուգական, բայց համեմատութեամբ այլոց՝ ոմն աւելի և ոմն նուազ փայլ ստացան։ Առաջին և զերափայլ հանճարներէն է և Եղնիկ կամ Եղնակ կողբացին, որոյ անունն և պարծանք մեծ է յաշ զիտնականաց քան ռամկին։ Պատմութիւնն սորա մասին չէ ճոխացած և ոչ բաւականապէս ճառած. զի մեր պատմութեան նպատակն է եղեր, — տիս' որ պատահար, — իւր նկարագրած անձանց արտաքին գործերը միայն զիտել, հարեւանցի ակնարկելով մտաւորը. մանաւանդ նոցա՝ որը արտաքնյոյն մէջ շատ շեն փայլած. և ահա վերջիններէս է Եղնիկ, և սոցա մէջ փառաւորագյոյներէն։ Այդ աղան պատմութենէն զոգցես նախախնամութեան ձեռամբ այնպիսի ակնարկներ են հասեր մեզ, որք ոչ ասկաւ լոյս կարեն սաւ հետամուտ քննողին։ Եղան քանի մի այժմեան հայ և օտարազգի խօսողներ Եղնիկ նկատմամբ՝ որը նորա վարուց վերայ թեթև ակնարկ մի միայն ձգեցին, և այն 'ի պասմութենէ յայտնի կետերով. նոցա զիխաւոր զիտումն էր իւր մասենագրութեանց ոչ զարձնել, թատի աստ մեք նպատակ ունիմք, յեցած պատմութեան յիշեալ մի քանի անշատու և համառօտ խօսից վերայ՝ քննական աշքով նկատել զիղնիկ թարգմանչաց գասան մէջ, և ըստ կարի կշռել նորա աստիճանը և շափը։

Եղնիկ, ինչպէս իւր « կողացի » մակրիրն կը ցուցնէ, էր « յԱյրաբառեան պաւում պաւումն 'ի կողը գեղջէ », որպէս խնամով կը յիշէ պատմիչն (<sup>1</sup>), որ անձին արժանաւորութեան ապացոյց է, ըստ հաւանականութեան ծնեալ յ386—390 (<sup>2</sup>), և Եղնակ կոշուած 'ի մանկութենէ 'ի ծնողաց կամ մեր-

1. Կորիւն, տպագրեալ 'ի վենետիկ 'ի 1833. էջ 20։

2. Այս հաշուով դրինք այդ թուականը. 'ի մօտոյ պիտի տեսնեմք որ տառից գիւտի ժամանակ ('ի 406—409) իւր ընկերներէն ոմանք կը գործակցին Այերորայ

ձաւորաց՝ անջուշտ իւր հեղահամբոյր և անոյշ բարուց համար, որ նշան էր իւր տպագայ իմաստասկը վարուց և հանճարոյն ։ իւր զարմն՝ անշան, որպէս մեզ կը թուի. զի անա իւր ծագումն՝ ի զիւղէ է ։ և իւր ընտանիքն կողբայ մէջ որշափ այլ անուանի կամ անանուն ենթազրեմբ, միշտ յայտնի է թէ զեղջովկ էր. և կորին կը լու նորա մասին, թերեւ ծննդավայրի յիշատա կութեամբ իմանալով և զայն, կամ աւելրոդ համարելով յիշել գեղկական ազգատոնմ մի: Հետեւաբար նորա օնտոնդն և մանկութիւնն գեղկօրէն է եղեր՝ կողբայ աղակոյսի մէջ. յորում չողջողալով ինչպէս զեղեցիկ աղամանդ արևու ճագագայթից ներքոյ, յանկարծ զերբկաց մէջ հայկական նշանազրերը պտուղ անապատաշրջիկ Մեխորոց աշաց դպաս լայցուց ։ Վերուց զայն Հայոց վարդպապետն, գորգուրալով տարառ իստոնեց իւր հաւաքած միւս ականց մէջ՝ յառանձնութեան անապատին՝ ի գաւառն Գործան (Խոր. Գլ. Խլ.), որ նոցա հետ կը տքնէր մեծ առաքինութեամբ (Խոր. Էջ 7, Խոր. Ղազ. Փրագ. և Սոփ.), որ նոքա ոչ միայն հոգենոր՝ այլ և ուսումնական կեանք կը վարէին, դործիները լինելու իւրեանց վարդպապետին գաղտնի խորհրդոց :

կորին երկու զաս աշակերտուց կը գնէ Մեխորոց. մին ընտառուած նորա տուանձնութեան ժամանակ (Խոր. Էջ 7), և օսկաւաթի՝ ինչպէս կը ցուցնէ « զոմանս աշակերտաւլ » (<sup>1</sup>) կոչումն. և միւսն (Խոր. Էջ 9)՝ նոյն ընդ խորենացոյ (Յ), որ մեխորութեան տառից զիւտի ժամանակ կը յիշուի՝ « զոտ մի մանկուց » , « մանկունու » կամ « մանկազին աշակերտուցն ո բաս սերով, ընտրուած զպրոցաց աշակերտաներէն՝ որը տքունի հրամանառ ժողովեցան գանիէլեանց զիւտի ժամանակ (Խոր. Էջ 9. — Խոր. Գլ. ԾԲ), և նոյն երկրորդ զասն ժամանակ ինչ աշակերտեցան ևս տուաջին աշակերտուց մինչեւ նոցա շուն յօտարու. որոշակի յետ տառից զիւտին՝ ի Ամմոս (Խոր. Էջ 10. — Խոր. Գլ. ԾԳ), որ ինքեանք այլ գնացին Մեխորոց և նոցա հետ (Խոր. Էջ 9), ըստ որոշման ասորի և յոյն զպրութիւն (այն է՝ լեզու) ուսանելու յԵղեսիա և յԱմիկ (<sup>3</sup>), որոց հետ ընդ ամէնն վաթսուն ՚ի թարգմանութեան և յայլ գործու. և առ այդ ՚ի հարկէ 20-25 ամեայ կային: Եզնիկ ևս որ քան զնոտա թօսի թէ կրտսեր էր, բնականապէս 16-20 ամեայ կար, որով ծնած կը ինչի յիշեալ թուականի մէջ, — խը կենաց նաև յետագայ թուականքը սոյն հաշուռով եմբ դրած:

1. Սոփերըն (Կտ. Բ. Էջ 9) քառասուն հոգի կը դնէ. որ եթէ սոյզ է և չէ երեակայտթեան ծնունդ, — զի այդ հեղինակն ունի ինչ այդպիսի կետեր (տես Էջ 12, Ճ. 1), — ասեիք է՝ թէ նորա մեծաւ մասամբ միանձնական կենաց մէջ մասին. ինչպէս Աղան՝ ըստ վկայութեան Փարավեցոյն՝ նորա աշակերտին (Էջ 15). և նոքա միայն եկեղեցւոյ պաշտամանց վիճակեցան՝ որք աւելի յարմար էին և կարող:

2. Խորենացի, զիրք երրորդ (նոյն է բոլոր հստուածիս մէջ), Գլ. ԾԳ:

3. Այս առաջին երթն է. երկրորդն եղաւ յետ քսանեռութ՝ թերեւ և աւելի տարուց, սկսեալ ՚ի տառից զիւտէն՝ որ ՚ի 406, մինչեւ ՚ի դարձ տուաջին թարգմանչաց:

Հողի կը հաշուին (Սոփերք, հա. թ, էջ 44) <sup>(1)</sup>: — Յովսէփ և Յովհան՝ որք յետ տառից զիւաին իսկոյն թարգմանակից կը լինին Մեսրոբայ (Կոր. էջ 40. — Խոր. Դշ. ԾԳ), և զեռնդ որ յետ ամաց ինչ վերակացու կը կարգուի 'ի Ապեր (Խոր. Գլ. կ), նոյնպէս և միւս աշակերտք <sup>(2)</sup>, 'ի հարկէ շափահաս էին և անապատի աշակերտներէն՝ և ոչ թէ նորընտիրներէն. զի փոքր թարգմանիշք զեր տհաս պատանիներ էին գրոց գիւաի ժամանակ, և որ հետեւաբար շատ ոչ կը բացուի նոցա գործօնէութեան ասպարէզն : — Արդ Եղնիկ ևս՝ — որ Յավսեփայ հետ թարգմանիշ և զրիշ կ'ուղարկուի յԱստիս և 'ի Յոյնս, յորմէ Կ'իմանամք՝ թէ հասակակից էր նորա և ուսումնակից, և զեռնդի և կորեան « սննդակից ո կը կաշոփ՝ ինչպէս ապա պիսի տեսնեմք, և յաւ ևս՝ 'ի համառօտ պատմութեան կորեան (Սոփ. ԺԱ. էջ 17) « անդակից իւրեանց եղբայրութեանն », այս ինքն զասակցութեան, և 'ի խորենացուն (Գլ. կ.) « ընկեր՝ աշակերտակից », — 'ի հարկէ անապատի մէջ աշակերտած և ուսած է զեռնդի և այլոց հետ :

Անդ մեծ յոյս կուսար Եղնիկ իւր վարդապետին՝ անձնական այլեայլ ձրիւքն և բարձր հանճարոյն նախնական ցոյցերով. զրաւեր էր նորա սիրաց. զրաւեր էր նաև զասակցաց սրտերը՝ սկսեալ զեռնդէն նոցա պարագանէն, բաց 'ի հանճարոյն՝ այլ և ազնուական բարուքն և անոյշ վարդմամք. այնպէս որ նոցա բերանէն իսկ կը լսեմք թէ « ընտանեգոյն » էին նորա հետ, այս ինքն այնչափ մներիմ որշափ չէին այլոց հետ. և կամ անպայման և սերտ ընտանութեամք միացած : Միանճնական առանձնութեան մէջ Եղնիկ իւր աշակերտակցօք կը սկսի արագ արագ յառաջնալ զիսութեան ասպարիզի մէջ. և արդէն աւարտելու մօտ էր, երբ ինդիր եղաւ հայկական ատոից և զըտուեցան, (դանիելեանքն 'ի 406 համեմատ կորեան <sup>(3)</sup>), և մեսրոբեանքն յետ երկու տարւոյ 'ի 408—409), նորա 16—20 ամեւայ հասակի մէջ : Այս

1. Առաջին թարգմանիշք, ինչպէս ըսինք, ուղղակի Մեսրոբայ աշակերտ են. երկրորդքն՝ Մեսրոբայ և առաջնոց: Թարգմանիշքը պէտք չէ շփոթել սուրբ Սահակյա վախթանը աշակերտաց, հետ՝ որք էին « ալք կրօնաւորք, խարազնազեստք, երկաթապատք, բռկագնացք, որ յար ընդ նմա շրջէին », (Խոր. Գլ. ԽԹ), և յետ նորա մահուան վանորէից մէջ ամփոփուեցան (Խոր. Գլ. Կլ). մինչ թարգմանիշք իւրեանց կեանքը սպառեցին ժողովրդեան վերաց .

2. Տէր կամ Տիրայր խորնեցի, Մուչէ տարսնեցի, Յովհաթան, Ենապէ, Դասնան, կորիւն, Արձան, Յովսէփ 'ի Վայոց ծորոյ, Թաղիկ, միւս Յոհան (Եթէ չէ Եկեղեցացին) և Աղան, Հնգետասան Հոգի՝ յիշեալ յանուանէ 'ի պատմաց այլեայլ հանգամանաց մէջ, որոց գասական կարգն որոշ չէ. բայց որոնք յառաջ հոգ վուութեան կը վիճակին քան իւրեանց ընկերոք. ինչպէս են բազումք յիշեալներէն, թուի թէ աւելի երեց էին, որով այն պաշտօնի համար պահանջուած խոհականութիւնն ունեին :

3. Բայտ կորեան (էջ 29) գպրութեան կամ գրոց գիւտի սկիզբն կը լինի Յազկերտի ութերորդ տարւոյն, որ թագաւորեց 399 թուին. զոր 'ի միամին հայուելով և գնալով ութերորդ տարին, Կ'ունենամք 'ի 406 թուականին դանիելեան

գէպքի մէջ իւր ընկերք դասովին գործակից և ուղեկից էին իւրեանց վար-  
դապետին՝ 'ի Մշխագետու առ ասորին Դանիէլ, ապա յԵղեսիա առ Պղա-  
տոն, 'ի Մամոս առ Հռոփանոս, Հայաստանի Յունաց բաժնին մէջ՝ ուսուցա-  
նելու հայ գպրութիւնը, որոց ոմանց յանուանէ և ոմանց « հանդերձ աշակեր-  
տօք », « իւրովք հաւասարօք » , « օգնականօց իւրովլք » և այլ ոսյնպիսի բա-  
ցարութեամբք կը յիշուին (Կոր. Էջ 9, 40, 46. — Խոր. Գլ. ԾԳ, ԾԷ). հաւանական է թէ Եզնիկ ևս անբաժան էր իւր ընկերներէն և նոցա  
ուղեկից բայց իւր քան զայլս փոքրկութեան համար՝ այս հանգամանքի մէջ  
այլք աւելի գործունեայ հանդիսացան :

Հայաստանի մէջ կ'արտօսանէ Եզնիկ իւր յատակախօս և միանգամայն  
վեմ հայկաբան բարրառը (1), որ այսօր հայերենի անհամեմատ օրինակ ծա-  
նուցուած է : — Անդ կը հմանայ պարսկերէն լեզուին, ինչպէս յայտնի է  
իւր Պարսից կրօնի մասին ունեցած խոր հմտութենէն՝ զոր գացէ միայն  
պարսկալեզու մատենից ընթերցմամբ կարող էր ստանալ Դ և Ե  
զարուց մէջ իրբ ընդհանուր սովորութիւն էր մեր շատ իշխանաւորաց և զիտ-  
նոց՝ պարսկերենի ուսումն, ազգին Պարսից հետ ունեցած քաղաքական յարրն-  
շութեան պատճառաւ : — Անդ կը հմտնայ նաև ասորերէն լեզուի, որում  
պարտաւորեալ էր ամենայն եկեղեցական անձն՝ տառից զիւտէն առաջ, այն  
լինելով Հայոց եկեղեցական և պարոցական լեզուն (2), և զի այնու միայն  
պիտի կարողանար նա յետոյ ասորի լեզուէ թարգմանութիւն յանձն առնուլ-  
և այնքան անզրազրութեամբ կ'ուսումնասիրէ՝ որ զոր օրինակ մինչ սուրբ  
Եփեմ (հայ թրգմ. Հա. Գ., Էջ 412) տեսնելով թէ սուրբ զրոց երբայցերէն  
կամ ասորի օրինակին մէջ « երկին » բառն յոցնակի զրուած է « երկինք »,  
զայն ինքեան փաստ առած՝ մեկէ աւելի երկին կը գնէ, թէպէտ և կար-  
ծեօք, նա շընդունիր և կը զեկուցանէ՝ թէ յոցնակի այն պատճառաւ է զրուած՝  
զի այդ լեզուք եղակի շեն կարող գործածել զայն (3): Զանց կ'ընեմք նորա  
նոյն լեզուի նկատմամբ ըրած միւս ինչ ինչ զիստողութիւնքը (4): — Անդ 'ի  
Հայաստան կը տեղեկանայ նաև յունարէն լեզուին՝ որ քաջայցոյ է և ան-  
կարօտ վկայութեան : Եւ այնուհետեւ կ'անցնի 'ի զաս վարդապետաց, յետ  
տառից զիւտին (5) այլոց հետ քահանայ ձեռնազրելով, և առ վայր մի ուս-

դրոց զիւտը, յորմէ յետ երկու տարուց (Կոր. Էջ 9. — Խոր. Գլ. ԾԲ) գտուեցան  
մեսորեւակնեմ՝ որ կը լինի նշանակեալ 408-409 թուականի մէջ:

1. Ուրախական է այն քայլն զոր ըրին հշմարիս ազգասէրք: յարգել իւրեանց  
հարց նուիրական լեզուն, որոց մէջ յոյժ բարձր տեղի մ'ունի Եզնիկայ բարրառն,  
և զործածել զայն յոդուա և 'ի զարդացումն աշխարհաբարի, փոխանակ օտար լե-  
զուներէ մուրալու մեզ համար խժական ոճեր և բառեր:

2. Ղազար Փարպեցի, տպեալ 'ի Վենետիկ 'ի 1873. ԺԱ. Էջ 36, 43, 44:

3. Իւր խօսքը հետևեալ 43 իջի մէջ կը գտնէք:

4. Եղծ աղանդոց, տպեալ 'ի Վենետիկ 'ի ԻՄՀՆ, Էջ 92, 190, 260, և այլն:

5. Բայց ոչ երբէք անդը քան զերթն յօսարս, զի յառաջ քան զայն՝ իւր գա-

ման կամ՝ դասասուռութեան կը պարապի, մինչեւ սահմանեցաւ իւրեանց (առաջին թարգմանչաց) երթն։

Թարգմանիշներէն հաղիւ զեց հոգի պանդխտութեան կ'ենթարկուին՝ բառ սոսյդ վկայից՝ կորեան և խորենացոյ, թողլով արիշ յիշատակարանաց անկապ և խառնակ վկայութիւնը<sup>(1)</sup>. չըրճ վարդապետաց հրամանաւ, և երկուքն՝ անձանց կամօք. և ոչ միանգամայն ընտրուեցան և գնացին, այլ հետպհետէ՝ այլ և այլ ժամանակաց մէջ. Առաջիներէն են Եզնիկ և Յովսէփ. այլ սոցա մասին ուրիշ որոշում կը լինի քան այլոց. սոցա կարողութիւնն և հանձար այնքան աւելի էր, և Սահմակ և Մեորոր այնքան մեծ յոյս ունէին՝ որ մինչ սոքա գիտութեան մշակ կը կարդուին և կ'առաքուին, այլոց նկատմամբ զեռ ոչ մի որոշում չկար, և ոչ գիտաւորութիւն՝ այդ պաշտօնին վիճակիցու. և զարձեալ յիտոյ մինչզեռ այլոց մի միայն զպրութիւն կը յանձնուի՝ յունականն 'ի թիւզանդիոն, սոցա՝ երկու միանգամայն, գնալ նախ յԵզինոիա և ապա 'ի թիւզանդիոն։ — Սոցա յԵզիսիա գնալու նպատակն էր այն՝ « զի որ միանգամ գտցի անդ զիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ (« յառորդական բարբառոյն » կոր. Էջ 20) 'ի մեր լեզուա բերցեն փոխով. զի յետ այնը 'ի թիւզանդիոն առաք եսցին 'ի նոյն գործ ». (Խոր. Գլ. կ): Որպիսի՛ ծանր և բազում ժամանակաց կարօս գործ. և սակայն որպիսի՛ զարմանալի յանցութիւն և զործունէութիւն թարգմանչացդ, և վաստանութիւն առարղաց կողմանէ։

Կը մեկսի Եզնիկ իւր ընկերաւ (՚ի 425 ըստ Հ. Զամշ.) 35-39 ամեայ, կը հասնի յԵղեսիա, և ինքեանք արքէն հմուտ ասորերենին՝ իսկոյն 'ի թարգմանութիւն կը ձեռնարկին։ Եզնիկ տեսնելով ասորերենի ընդ երրայականին ունեցած սերտ յարաքերաւթիւնը, և զարձեալ վերջնոյս կարեւորութիւնը թարգմանութեան համար, մանաւանդ սուրբ գրոց՝ որում իրեն այլ սակիցներէն ոմանք հոգեւոր պաշտամանց մէջ կը մտնեն. և առ այս 'ի հարկէ քահանայութիւն ունեին։ (Խոր. Գլ. Ծի, կ. — կոր. Էջ 14, 18):

1. Ինչպէս են Սոփերը (հո. Բ. Էջ 14). Նախադրութիւն ներբողինի խաչին Դասիթ անյալթի (Էջ 99). Յայսմաւորք և այն, որդ նախ՝ առաջին և երկրորդ թարգմանչաց կարգը չփոթելով՝ խառն իրերաց մէջ կը յիշատակին, նախադասելով զոմանս յերկրորդ գասէն քան զառաջինս. նոյնպէս է և կիրակոս (Էջ 16): Սոփերքն դարձեալ կը չփոթէ՝ ոք երբ և ուր են ընտրուեր. Երկրորդ՝ առաջին գասէն աւելի 'ի Յունաստան գնացողներ կը զնեն քան զկորին և Խորենացին, ինչպէս օրինակի հօմոր Աղանը, որ իւր կեանքն անապատի մէջ անցուց ըստ Փաշպեցոյն (Էջ 15), և երբեք շմեկնեցաւ Երրորդ՝ բոլոր թարգմանիչքը՝ առաջինք և վերջինք՝ 'ի միասին միանգամայն յԵղեքսանդրիաւ 'ի թիւզանդիոն, յՈթէնս... գնացած կը պատմին, որ յայտնի սխալ է. զի առաջինք յԵղեսիա և թիւզանդիոն միայն գնացին. և վերջինք՝ յԵղեքսանդրիաւ զիսաւորապէս, և անցողաբար յՆուգեսիա, 'ի Պաղեստին, յԱթէնք, 'ի Հռոմ, 'ի թիւզանդիոն (Կոր. Էջ 20-21. — Խոր. Գլ. կ, կթ). և այն այլեայլ ժամանակ, և առաջինք առանձին և վերջինք առանձին։

որշուած էր գործակցիլ սպազայի մէջ, կ'որոշէ ուսանիլ նաև երբայեցերէնը՝ Ահաւասիկ ինքնաւանդ նշանք իւր հմտութեան. և Սատանայ յլշբրայեցոց և Ասորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի ». « ոգւոյ և հողմայ անոն երբայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է ». « և երկինս և երկինց երկինս յայն սակա գուանեմը 'ի զիրս, զի յլշբրայեցոց լեզու երկին շմարթի ասել, որպէս և ոչ յասորի լեզու չուր կամ երկին- այլ մին բազմաբար ասի ». (Եղծ աղանդ. էջ 52, 90, 260). Այդ նուրբ զիսողութիւնքն էին թերեւս հաւասարից զաղղիացի Պ. Մարտինի և գերմանացի Վետաների<sup>(1)</sup> համար՝ կարծելու՝ թէ տեղեակ էր նա երբայեցերենին ևս : — Եղնիկ գարձեալ ձեռնամսին եղաւ. 'ի թարգմանութիւն :

Ասորւոց գպրութեան մէջ թարգմանելու կամ ուսանելու այնշափ ընդարձակ ասովարէզ չինելով՝ որշափ հելլենականի մէջ, ուսումնատենչն Եզնիկ մաօց Փիլու 'ի Յունաստան՝ կը փութար զաղ ընդ փոյլ աւարտել իւր գործերը : Արդէն իրը երեք<sup>(2)</sup> տարի անցեր էր և մօտ էին վերջ տալ իւրեանց օսարութեան առաջին շրջանին, և ահա անհաստատ հողմոյ ձայներ խոռվեցին նոցա լսելիքը » « իրը թէ պատրաստին մեծն Սահակ և Մեսրոպ զայրա ապարել 'ի Բիւզանդիոն ». (Խոր. Գլ. կ) : Զայր երբ լսեցին, կարծելով բնականապէս՝ թէ ինքեանց յանձնեալ զործը (Նկատմանմբ սուրբ զրոց) այլք պիտի երթան կատարել, և հետևաբար ինքեանք պիտի զրկուին նաև յունական զիտութեանց ուսմանէն՝ այլ ևս չերթալով 'ի Բիւզանդիոն, երիտասարդական չերմ արիւնն, և յառաջ քան զայն զիտութեան անյափ տենչն, ինչպէս կը վկայէ Խորենացին (Գլ. կ) « նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց և, մղեցին նոցա քայլերն 'ի Յունաստան, և « առանց հրամանի վարդապետացն իւրեանց նոյն ընդ նոյն չուեալ քնացին 'ի Բիւզանդիոն » (Անդ), զրկելով անոնց իւրեանց երկերը (Խոր. էջ 20) : Ի՞նչ ցնծութեան ժամ էր. Եզնիկայ համար այն ժամն՝ յորում մուռ զործեցին աշխարհի զիտութեան ամբարանոցի մէջ... Զերկարենք ասս մեր խօսքը՝ նորա եռանդուն մուաց արտայատութիւնքը նկատելով :

Նորա՝ ինչպէս բնական է՝ նախ յունական զիտութեան գուառ՝ լեզուն ձուլցին կատարելագործեցին, զի իւրեանց վարդապետն Մեսրոպ քաջ տեղեակ չէր նոյն լեզուի, որոյ համար յոյն ճարտար Հռովհանոսի՝ և ապա մեծին Սահակայ<sup>(3)</sup> կը կարստէր՝ նոր տառերով կազմած վանկերը՝ յունական սիլորայից

1. Բ. Պ. Պ. Մարտին, Ներածութիւն նոր կտակարանի բնագրաց քննութեան. Գործնական մասն, Հա. Բ. էջ 284. — տպ. 'ի Պարիս 'ի 1884:

Վետան, Նիրավիլ Հայրախօսութեան մէջ, Հա. Գ. էջ 231-239: Նոյն ուսումնակիրութիւնն թարգմանութեամբ դրուած Աէ Պատկերի 18 Սեպտ. 1892 պրակին մէջ.

2. Յայտնի չէ՝ թէ Հ. Զամիեան ինչ փաստով մի տարի կը գնէ. բայց հարկ է նկատել որ նորա Եդեսիոյ մէջ իւրեանց յանձնուած գործը կատարեցին լրացուցին ըստ կորեան (էջ 20). և առ այդ կարևոր է առ սակաւ երեք տարի զնել:

հետ համեմատելու ժամանակ (կոր. էջ 10. — խոր. Գլ. ՄԴ. — Ղազ. Փրա. էջ 42, 48). որով և նորա լաւ չեին հմտացած : Մեր նոցա սոյն լեզուի նկատմամբ սաացած մեծ հմտութիւնը բացայատելու համար բաւական կը համարիմք յիշել խորենացւոյ խօսքը (Պլ. կ), « քաջ վարժեալ հելլէն զպրութեամբ ո, և կորեանը (էջ 24) թէ « ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիշս կարգէին ըստ հելլենական լեզուին », սաելորդ համարելովլ որիշ որ և է հաւասարիք : — Յիշեալ հինգ լեզուաց մէջ արգեօք ուշեղն Յովսէկի ըստ թուոյ և շափոյ նոցա Եզնկայ հետ զուգընթացաւ թէ ոչ չեմք կարող վկայել, չունելով այն առձեռն փաստերը՝ զոր ունիմք Եզնկայ նկատմամբ՝ բաց ՚ի պատմութենէն նաև իւր հեղինակութենէն . սակայն այս ստոյդ է թէ յետոյ Եզնկայ լեզուազիսութեան կարելորութիւն արուելովլ, զիտնական ասպարիզի մէջ յայտնեցաւ (կ). իսկ Յովսէփայ ոչ ինչ այնպէս . որով նորա վերայ առաւելութիւն մի կը նկատուի քան սորա : Առդ զարգմանալի է Եզնիկ որ այնքան զիրաւ լոծեց պարզեց այն գուարին լեզուաց կնճռատ կապերը . և այն՝ առանց մասնաւոր փոյթ ընելու լեզուական հմտութեանց . այլ պատահաբար՝ երբ այդ լեզուները գործածող ազգաց զիտութիւնքը իւր մոտաց մէջ շաեմարտնելու, անձնիւր հանճարոյն հետ խառնելու, և ազդին սեփականելու համար հարկ կը լինի ուսանիլ զանոնք :

Այսուհետեւ կը պարզէ Եզնիկ իւր առազասաը գէպ ՚ի կատարելութիւն իւր հանճարոյն և իմաստութեան : կը յաճախէ ընդ Յովսէփայ՝ յունական ճեմարանաց մէջ, կը բանայ ամէն զբասուն և մատեան, կը լսէ ամէն իմաստնոյ և իմաստափրի հզօր ձայները . և ինչ որ իւր աշաց և լսելեաց կը հանդիպի, կը դրոշմի իւր խոր մոտաց և անհմեման յիշողութեան քարտիսի վերայ . և ինչ որ արժանաւոր է թարգմանութեան, իւր գրչի տակ անվանի : — Գոցէ անդ պարապեցաւ առանձինն Ռուերերանի թղթոց մեկնութեանց թարգմանութեան՝ իրը հաճոյական զբաղանք մի, յարմար իւր ճաշակի՝ մոտաց և զրչին . զոր և այլուր հաւասարելու առիթ պիտի ունենամք : — իւր գրչին տակ անկանին նաև հանճարոյն սեփական արդինքն . « Ճեռնարկեցին ՚ի թարգմանել և ՚ի դրել » , կ'ըսէ խորենացի (Պլ. կ). և ահա անգէն ՚ի Յովսէսաւան շարադրեց նա զրութիւներ . ինչպէս շարադրեց և Յովսէկի, զի յոգնակի կը խօսի պատմիչն . այլ եղո՞ւկ, որ լերջնոյս հեղինակութենէն ոչ մի մասցորդ չունիմք . իսկ Եզնկայն՝ սակաւաթիւ . թէպէտ այնչափն բաւական է նորա հանճարոյն մեծութեան լիկայելու :

Եզնկայ և Յովսէփայ յլշեսիոյ ՚ի Բիւզանզիսն գնալէն ՚ի վեր ժամանակ ինչ անցեր էր, կ'ըսէ պատմիչն (կոր. էջ 24), երբ « դէպ լինէր ումանց եղարց ՚ի Հայաստան աշխարհէս (« յիւրեանց կամրց », խոր. Գլ. կ) զիմել իշանել ՚ի կողմանս Յունաց (՚ի 429—431), որ և Ղենազէս առաջնոյն անուն

4. Առերբ գրոց թարգմանութեան նկատմամբ ՚ի մօտոյ խօսելու ժամանակ պիտի տեսնեմք զայդ :

էր, և երկրորդին կորիւնս, (յառաջ քան զսոսա առաքեալ 'ի Սահակայ և Մեսրոբայ' և յետոյ հասին նաև Յովհան և Ալձան, ըստ Խոր. Գլ. կ), և մատուցեալ յարէին յԵղնիկն՝ իրեւ առ ընտանեգոյն սննդակից՝ 'ի կոստանդինական ցաղաքին, և անդ ժիաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զինդիրն վճարէին ո : — կը ինչորմ ընթերցողաց ուշը սա կետի վերայ զարձնել, « մատուցեալ յարէին յԵղնիկն » . և ինչո՞ւ ոչ 'ի Յովսէփ, որ շատ առաւելութիւններ ունէր քան զնա . ըստ որում կարգաւ և հասակաւ աւելի մեծ էր, որոյ համար և քան զնա յառաջ յառաքրէզ կուզայ պատմութեան մէջ՝ .. և նախագաստած է միշտ թէ միասին և թէ առանձնակի յիշուելու ժամանակ . ըստ այնմ և քան զԵղնիկ նախածանօթ աշակերտակցութեամբ Ղեռնդի և թերեւս կորեան հետ ևս : — Երկու պատճառներ կան . մին նոցա Եղնկայ հետ ունեցած եղական մատրութիւնն էր, և յարէին... իրը առ ընտանեգոյն սննդակից », որ 'ի հարկէ ծնունդ էր 'ինչպէս առաջ ըսինք 'նորա յանկուցի և չքնազ վարուց 'որ հեշտ ընծայեր էր նոցա իր ընկերակցութիւնը, գեղեցիկ համբաւոյն և բարձր հանճարոյն' որ կարող էր նոցա նպաստամատոյց լինել առաջիկայ ընթացքի մէջ : Երկրորդ նկատելի կէտն է այս՝ որ այն ուսումնական ընթացքի մէջ առաջին գործիշ Եղնիկ էր . այս է պատճառ՝ որ նախ՝ Ղեռնդ թարգմանչաց դասապուին (Խոր. Գլ. ԾՀ), կորիւն և այլ երիցագոյն թարգմանիչք (զոր օրինակ Յովհան՝ գործակից Մեսրոբայ և Յովսէփայ 'ի Սամոս, ինչպէս յիշեցինք յԷջ 40, և այլն) կ'երթան կը յարէին 'ի փոքրագոյնը Եղնիկ՝ փոխանակ Եղնիկ 'ի նոսա յարելու ըստ բնական կարգի և պատշաճի երկրորդ՝ կորեան ընծայուած համառօտ պատմութիւնն այդ ուսումնական ասպարիզի յիշատակութեան մէջ զԵղնիկ նախագաս կը զնէ քան զՊովսէփ . և երրորդ՝ այս պատճառաւ ևս արդեօք բաց 'ի մատրութիւնէն, Ղեռնդ և կորիւն և այլք փոխանակ ընդ Յովսէփայ՝ Եղնկայ հետ կը միաբանին :

Այս միջոցիս ('ի 484) հանդիպեցաւ Եփեսսի ծողովն ընդգէմ Նեասորի՝ կոստանդնուպոլայ պատրիարքին : Մեր ուղղորդն ներկայ էին Բիշանդիօսինի մէջ եղած մեծամեծ շփոթութեանց և յեղափոխութեանց . և թէ յայնժամ յԵփեսս քնացին, մեզ անյայտ է : Նեասորի յաջորդն Մաքսիմոս մեծ սէր ցոյց տուաւ մեր թարգմանչաց (Խոր. Գլ. կ), որով ընդարձակ ասպարէզ գտան աշխատելու :

Ցանդգաստս անցան հինգ տարիներ 'ի Յունաստան . նոցա շրջանի մէջ Եղնիկ ուրիշ զիտաւորութիւն չէր ունեցեր, բայց եթէ յինել ճշմարիտ իմաստասէր, ինչպէս կ'իմանան հինք . այսինքն՝ զիտութեան ամէն մասանց տեղեկանալ խռականապէս, ըստ շափու իր ընդարձակ կարողութեան և ըստ պայմանի այն ժամանակի գիտութեան . թէպէս ոչ ամէն ճիւղի մէջ հաւասարապէս : Հմտացաւ նա ոչ միայն քրիստոնեայ՝ այլ և հեթանոս զիտութեամբ . « քաջ վարժեալ, ըսաւ պատմին, հելլէն զպրութեամբ » . զպրութիւն թէ լեզու և թէ զիտութիւն կը նշանակէ . և նորա հմտութենէն կ'իմանամբ՝ թէ զիտութիւն ևս ունէր : Եւ այնուհետև կը տենչար Եղնիկ հայ-

բենակը ոգւով՝ փաթօվ զառնալ՝ ի Հայաստան, իւր իմաստութիւնը և հանունը գործածելու յօդուո նորա բարգաւաճման։ Եւ պատրաստեր էր իւր հետ զրութիւներ՝ նախնաբար յիշուած, թարգմանութիւներ՝ զործակցութեամբ իւր զասակցաց (կոր. Էջ 21), և առըրբ գրոց ընաիր օրինակներ՝<sup>(1)</sup> յօրոց մի օր պիտի ուղղուէր հայկական շքնաղ օրինակն (կոր. Էջ 21. — Խոր. Գլ. կ. լլ.): Յեղայ՝ կ'ըսէ պատմիչն (խոր. Գլ. կ. լլ.), թէ կիրողէն՝ որ էր նաև խազահ Եփեսոսի ժողովայն, Պրոկրէն որ էր յաջորդ սակաւակեաց Մարսիմուի, և մելիստինեցի Ակակէն գիր ստանալով առ Սահակ հայրապետ, որ չէր կարողացեր ժողովայն ընթերակայ լինել իւր հոգոց և զբաղանաց համար, և երկու ժողովոց կանոնքը, յուղի անկան՝ ի հայրենիս (ի 434—435), յետ իրը իննամեայ պանդիստութեան, իւրեանց երկասիրութեամբք հանգերձ, որ ժամանակ Եզնիկ 44—48 ամեայ էր. և եկան ողջունեցին իւրեանց վարդապետներն Աշտիշատու մէջ (խոր. Գլ. կ. լլ.)։

Այսուհետեւ կ'ուզեմ Եզնկայ նոր ասպարիզին վերայ ուղղել ընթերցողաց ոչն և արուշը, որոյ սկիզբն կը լինի սուրբ գրոց վերայ ըրած վաստակով։

1. Զգիտեմ ինչը՞ Վարդան պատմիշ (տպ. 'ի Վենետիկ, 'ի 1862, Էջ 81,) սուրբ գրոց այդ օրինակները և օրինակք սրբոյն Ղւանդի» կը կոչէ. ուր նախ՝ զի՞ տեմք թէ այն օրինակներն սրբնել Եզնկայ և Յովսեփայ էր յանձնուած այն ժամանակ՝ երբ զՂւանդ՝ 'ի Յունաստան դրկելու դիտաւորութիւն ոչ կար և ոչ պիտի լինէր. որոյ համար փախստեամբ գնաց. երկրորդ՝ որովհետեւ Եզնիկ պիտի գործածէր զանոնք, ինչպէս յետոյ կը տեսնեմք, կարեւոր էր որ հոն 'ի Յունաստան քննէր հմտանար նոցա՝ յցն դիտուներէ. և ահա Ղւանդ այն օրինակաց հետ յարաբերութիւն չտնէր, միայն թերեւ գործակից էր նոցա դիւտին։

Շարունակելի